Խաչելութեան պատկերագրութեան զըլխին դրուած է մի առանձին քար, որ ճակատն է կազմում, վերևը դարնէզով, ուր փորագրուած է «համբարձաւ ած» ևն. սաղմոսի խօսքերը, իսկ մնացած մասը գոգաձև է և պատկերաքանդակներով ծածկուած։ Կեդրոնում բոլորակ և խոր սկաւառակի մէջ Ամենափրկչի անդրին է, աջով խաչակընքում է և ձախով փաթոյթ բռնած. նիմբուսը բոլորակ է և գուբս ընկած, մազերը ոլորուն գանգուր և միրուքը կլոր. վերան ձգել է ծալքերով հարուստ ծիրանի։ Սկաւառակը բռնել են երկու ծնկաչոք հրեշտակ, աջից և ձախից. քանդակագործը չէ կարողացել մարմնաւորել ծնկներից ցած ծալած ոտքերը, կարծես փափուկ շոր լինի ծալած։ Հրեշտակների երկար պարեգօտի ծալքերը վերից վար շարունակւում են և չոքած մասերում. նրանք դէմքերը դարձրել են դէպի կողքերից կանգնած ֆիգուրները, որ խաչագլուխ գաւազան ունին ձեռքերին։ Այդ ֆիգուրները նիմբուսով են. աջով գաւազանն են բռնել, ձախը դէպի համբարձող Տէրը բարձրացրել։ Նոքա հագել են երկար մինչև ոտները հասնող պարեգօտ, լաթով գոտեորած, վերնազգեստի փէշերը փողփողում են քամուց. առաքելական խմբի ներկայացուցիչներն են, երեսները դէպի նայողները դարձրած, որպէս վկայ կատարուած իրողութեան՝ համբարձման։

Այս նկարագրութիւնից պարզ է, որ այստեղ խաչի արուեստի մի փառաւոր և հետաքրքրական երևոյթ ունինք իւր բարդ բովանդակութեամբ, համաձայն Անանիա Սանահնեցու դաւանաբանական մեկնաբանութեան, խաչի չարչարանքից մինչև համբարձում փրկագործութեան միութիւն համարելով, ինչպէս տեսանք երից սրբասացութեան բացատրութեան մէջ (ԺԹ. պր.). գեղարուեստական նրբութեան պակասը լրացուում էր և կենդանանում ներկերով, որի հետքերն են միայն մնացել, և լիովին գաղափար չենք կարող կազմել։ Բայց Հաղբատի տաճարի հարաւային պատի որմանկարչութիւնը մօտաւորապէս նոյն ժամանակից և նոյն վանքում ծաղկած մանրանկարչական բարձր արուեստը ԺԳ. դարում, որի մի թանգագին մնացորդն ունինք Գետաշէնից մեր ձեռքով Էջմիածնի մատենադարանը բերուած աւետարանով, ինչպէս և ճարտարապետական աննման ստեղծագործութիւններով, ապացոյց կարող են լինել, թէ Հաղբատում չէին պակասում արուեստագէտներ, գոյներով կենդանացնելու քանդակագործական այս հոյակապ աշխատանքը(1)։ Արձանը կանգնած է շէնքի մէջ՝ սրահում, և ոչ ազատ բնութեան, ուրեմն և արուեստագէտը պէտք է գործադրէր համապատասխան միջոցներ, իւր գործը տպաւորիչ դարձնելու համար։ Հնագիտական առանձնայատկութիւնների մասին կ'խօսենք յետոյ։

ԺԴ.

Այս միևնոյն Ամենափրկչի երեք փոփոխակներն ունինք ԺԳ. դարի Մամիկոնեանների կալուածներում, երեքն էլ ժամանակակից Հաղբատի խաչարձանին. դոցանից հնագոյնը Վեղիի ակունքներից ոչ հեռու՝ Զղինգեոլ կոչուած գիւղի սահմաններում է՝ ՉԻԸ = 1279 թուականից (պարկ. 37ա, 37բ), Մանկուս պատմական կեդրոնից քիչ դէպի հարաւ-արևելք։ Տարաբաղդաբար այս փառաւոր յուշարձանը, դարձեալ Ամենափրկիչ անունով, որ իւր պատկերագրութեամբ պակաս հետաքրքրական չէ Հաղբատի նոյնանուն խաչից, իսկ գեղարուեստական քանդակագործութեամբ աւելի բարձր, կանգուն չէ այլ ևս. բուն

(1) Խաչքարերի զունաւորելու կամ ներկերով պատկերաւորելու սովորութեան ապացոյցներ երևան եկան եւ Անիում՝ ակադեմիկ Մառի պեղումներով՝ Պապկա եւ Վախրադինի եկեղեցու մօտ, 1912 թուին։ «Եկեղեցու արեւմտեան կողմը եղել են խաչքարեր, հաստատուած բարձր, երկնաւոր կամարներով պատուանդանի վերայ։ Կամարների տակ եղած տարածութիւնը ծածկուած է եղել որմանկարներով. մի նորութիւն խաչքարերի համար. որ առաջին անգամ է երեւան գալիս Անիում։ Տարաբաղդաբար հնարաւորութիւն չէ եղել արտանկարելու այն, որովհետեւ արեւը զարկելուն պէս, եղծուել են գոյները եւ փշրուել ծեփը (Մեր յօդ. Հովիտ. 1912. 453. «Անիի ներկայ տարուայ պեղումներից» վերնագրով)։

Նման երեւոյթ, բայց զարդանկարչութեան նրկատմամբ տեսնում ենք Այրի վանքում՝ Պապաքի ժամատան խաչքարերի վերայ։